ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ապրիլի 2016թ. թիվ 109-Ա

Կ.ԱԶԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109 հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, 112-րդ և 130-րդ հոդվածների, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հաշվի առնելով Կ.Ազարյանի դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Կարեն Ազարյանին 2016 թվականի ապրիլի 19-ից ազատել «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2011 թվականի ապրիլի 14-ին կնքված N 3 ԱՐ աշխատանքային պայմանագիրը:

2. «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի գլխավոր հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Կարեն Ազարյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. ապրիլի 18
ք.Վանաձոր